ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 20.01. 2021թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 15-ը (տասնհինգ):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ,
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ,
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական,
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն,
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ռազմական ամբիոնի պետ,
11. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
12. Թ. Մելիքյան՝հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝մանկավարժության ֆակուլտետի դեկան,
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,
15. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ԿԳՄՍ նախարարի տեղակալի՝ ՇՊՀ ռեկտորի ԺՊ-ին ուղղված 27/18. 1/273-2021 գրության մասին

Հաղ.՝ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ և սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝Ն. Ավետիսյան

3. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Աստղիկ Հակոբյանի դիմումի քննարկման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

ԿԳՄՍ նախարարի տեղակալի՝ ՇՊՀ ռեկտորի ԺՊ-ին ուղղված 27/18. 1/273-2021 գրության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ 14.01.2021թ.-ին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանից իրեն ողղված գրություն է ստացվել, որով ներկայացվում է, որ Շիրակի մարզի դատախազությունը միջնորդություն է ներկայացրել ԿԳՄՍՆ՝ՇՊՀ-ի ռեկտորի ԺՊ-ի և աշխատակիցների աշխատանքում տեղ գտած թերությունների, դրանց պատճառների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու մասին:

Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց,- գրությամբ նշվում է նաև, որ նախարարությունում քննարկվել է միջնորդությունը և, հաշվի առնելով, որ դրանում բարձրացված հարցերի կարգավորումը գտնվում է համալսարանի իրավասությունների շրջանակում՝առաջարկվում է նախաձեռնել բուհի կրթական գործընթացը կարգավորող իրավական ակտերի, կանոնակարգերի վերանայման, ըստ անհրաժեշտության լրամշակման գործընթաց՝ դրանցում սահմանելով հստակ ընթացակարգեր, ժամկետներ ու իրավակարգավորումներ, որոնք հետագայում կբացառեն այդ ակտերի և դրանց դրույթների ոչ իրավաչափ կիրառության դեպքերը, և սեղմ ժամկետում նախարարություն ներկայացնել արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Կցված է նաև Շիրակի մարզի դատախազության միջնորդությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ն. Ավետիսյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Սարգսյանը, Թ. Մելիքյանը, Ռ. Մարդոյանը, Օֆ. Հովհաննիսյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Պատասխան գրությամբ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանին հայտնել, որ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 22.01.2021թ.-ի ռեկտորատի նիստում քննարկել է Շիրակի մարզի դատախազության ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ. Ժ. Դումանյանին հասցեագրված միջնորդությունը: Քննարկման ընթացքում ռեկտորատի անդամների կողմից հնչել են տարբեր կարծիքներ և առաջարկություններ միջնորդագրում առաջ քաշված թերությունները բացառելու, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ձևավորելու ուղղությամբ: Լսելով կարծիքները և առաջարկությունները՝ ստորաբաժանումների ղեկավարներին տրվել են կոնկրետ հանձնարարականներ հիմնադրամի ներքին իրավական ակտերի, կանոնակարգերի վերանայման և լրամշակման գործընթացներ կատարելու ուղղությամբ, այսուհետ նման երևույթները և բացթողումները բացառելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ և սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ և սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսերի իրենց մասնագիտությամբ աշխատող, հղի և մեկ տարեկան երեխա ունեցող, ինչպես նաև Գյումրի քաղաքից դուրս բնակվող ու տրանսպորտային խնդիր ունեցող ուսանողներին՝ անհրաժեշտ փաստաթղթային հիմքերի առկայության պարագայում (փաստաթղթերը ներկայացնել մինչև 29.01.2021թ-ը ներառյալ) թույլատրել պրակտիկաների վայրերի փոփոխություն:

2. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ արտակարգ դրության և պատերազմական գործողությունների պայմաններում երկրից դուրս գտնվող 2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ և սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսերի ուսանողների համար պրակտիկան կազմակերպել մեթոդիստների հետ հեռավար կապի միջոցով, պրակտիկայի արդյունքներն ամփոփել օրինակելի աշխատանքների ներկայացմամբ:

3. 2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 5-րդ և սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսերի այն ուսանողները, ովքեր պատերազմական գործողություններին մասնակցելիս վիրավորվել են, բուժվում են, ինչպես նաև դեռևս ծառայության մեջ են գտնվում, թույլատրել պրակտիկան կազմակերպել մեթոդիստների հետ հեռավար կապի միջոցով, պրակտիկայի արդյունքներն ամփոփել օրինակելի աշխատանքների ներկայացմամբ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Աստղիկ Հակոբյանի դիմումի քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ «Սոցիալական գիտությունների և իրավունքի» ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Աստղիկ Հակոբյանը ռեկտորի ԺՊ-ին դիմում է ներկայացրել, որով տեղեկացնում է, որ ինքը կերակրող մայր է և այդ պատճառով չի կարողացել մասնակցել «Հոգեբանական հետազոտությունների մեթոդիկա» առարկայի քննությանը: Միաժամանակ նշել է, որ անհատական աշխատանքից գնահատվել է 100 միավոր, որը համապատասխան գործակցով անցողիկ 40 միավոր է ապահովել և խնդրում է թույլ տալ անհատական ժամանակացույցով: հանձնել ամփոփիչ քննությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ե. Սերոբյանը, Օ. Հովհաննիսյանը, Հ. Մելքոնյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Աստղիկ Հակոբյանի դիմումը բավարարել և նրան թույլ տալ «Հոգեբանական հետազոտությունների մեթոդիկա» առարկայի ամփոփիչ քննությունը հանձնելու անհատական ժամանակացույցով::

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան